ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ

Վարդանյան Ա.Ռ. (ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևան, Հայաստան)
ani.robertovna@gmail.com
Ներկայացման ամս.՝ 05.08.2019
գրախոսման ամս.՝ 12.08.2019
տպագրության ընդունման ամս.՝17.09.2019

Հաշվի առնելով ՀՀ զինված ուժերում ինքնասպանությունների քանակական ցուցանիշի արտահայտվածությունը և դրանց կանխարգելման անհրաժեշտ միջոցների մշակման անհրաժեշտությունը՝ սույն հոդվածում քննարկվում են զինծառայողների ինքնասպանությունների և ինքնասպանության փորձերի դեպքերում իրականացված դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում կատարված փորձագիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա առանձնացված այնպիսի առանձնահատկություններ և օրինաչափություններ, որոնք հանդիսանում են ինքնասպանություն գործելուն նպաստող գործոններ և որոնց ուղղությամբ համակարգային նպատակաուղղված աշխատանքները կարող են հանդիսանալ զինծառայողների ինքնասպանությունների կանխարգելման գործուն տարբերակներ:

Հանգուցային բառեր՝ *ինքնասպանություն, ՀՀ զինված ուժեր, զինծառայող, դատահոգեբանական փորձագիտական հետազոտություն:*

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում 2006-ից 2019թ. ընթացքում իրականացվել են զինծառայողների ինքնասպանության և ինքնասպանության փորձերի գործերով մոտ 100 դատահոգեբանական փորձաքննություններ, ընդ որում տարբեր տարիների ընթացքում, այդ թվում մինչ վերջին օրերս նշանակված դատահոգեբանական փորձաքննությունների ցուցանիշների էական տարբերություն, նշանակալի փոփոխություն չի արձանագրվել:

Ինքնասպանության և ինքնասպանության փորձի դատահոգեբանական փորձաքննությունների դեպքում որպես ապացույցի ձև իրավական համակարգի համար նշանակություն ունի մեղադրյալի գործողությունների և ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ կատարելուն նախորդող ժամանակահատվածում տուժողի հոգեվիճակի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Ընդ որում, եթե որևէ անձ ի պաշտոնե իրավասու է կանխարգելել այդ գործողությունները, սակայն որևէ գործողություն չի իրականացրել, ապա պատճառահետևանքային կապի առկայությունը դիտարկվում է նաև վերջինիս անգործության շրջանակներում:

Հետմահու և ինքնասպանության փորձի դատահոգեբանական փորձաքննությունների դեպքում փորձագետի առջև դրվող հիմնական խնդիրներն են ինքնասպանությանը (կամ ինքնասպանության փորձին) նախորդող շրջանում տուժողի հոգեվիճակի պարզումը, ինչպես նաև որոշակի արտաքին ազդեցության և սուիցիդենտի հոգեբանական դեզադապտացիոն վիճակի փոխկապակցվածության գնահատումը:

Ըստ մեր հաստատությունում անցկացված դատահոգեբանական փորձաքննությունների արդյունքների վիճակագրական տվյալների՝ զինծառայողների շրջանում ինքնասպանության դեպքերը գերակշռում են ինքնասպանության փորձերի դեպքերին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձագիտական հոգեախտորոշման ընթացքում փորձագետը հնարավորություն չունի իրականացնել փորձագիտական զրույց, դիտում և թեստավորում, բացի այդ այն ռետրոսպեկտիվ հոգեախտորոշում է, և հոգեբանը պետք է արտահայտի իր հիմնավորված դատողությունը այնպիսի իրադարձությունների մասին, որոնք կատարվել են անցյալում և պահպանված են միայն փաստաթղթերում, ուստի լիարժեք հոգեբանական հետազոտության իրականացման համար առաջին հերթին կարևորվում են օբյեկտիվ և հնարավորինս մանրամասն տեղեկությունները, որոնք տրամադրվում են վարույթն իրականացնող մարմնի կողմից: Տրամադրվող նյութերի հիմնական խնդրայնությունը զինծառայողների անձնային առանձնահատկությունների և ծառայության ընթացքում ցուցաբերած վարքային դրսևորումների վերաբերյալ սահմանված փաստաթղթերի ոչ խորքային և ֆորմալ բնույթն է, ինչը ենթադրում է նույն բառային ձևակերպումներով, զինծառայողների անհատական հոգեբանական յուրահատկություններն ըստ էության չարտահայտող բնութագրական տեղեկությունների առկայություն, որոնք խնդրահարույց են ոչ միայն հենց փորձագիտական հետազոտության առումով, այլև դիտարկելի են, թե արդյոք հնարավոր է դրանք բովանդակային առումով կիրառել զինծառայության պատշաճ կազմակերպման նպատակով, որն ըստ էության ինքնին զորամասերում բարոյահոգեբանական համապատասխան մթնոլորտի ապահովման և հանցավորության կանխարգելման կարևոր գործոն է:

Անդրադառնալով զինծառայողների ինքնասպանության հոգեբանական տեսակետներին՝ հարկ է նշել, որ խնդրո առարկա են և՛ զինծառայողների անձնային առանձնահատկությունները, վարքային դրսևորումները, հարմարողական ներուժի առանձնահատկությունները, և՛ զորամասերում ինչպես ըստ կարգի սահմանված օրենքները, այնպես էլ հարաբերությունների կարգավորման չգրված նորմերը, ընդունված վարքուբարքը և բարոյահոգեբանական մթնոլորտը:

Ըստ էության զինծառայության պատշաճ և բարեհաջող ընթացքը պահանջում է զինծառայողի հոգեբանական պատրաստվածություն և հարմարողական գործընթացի փուլային ընթացք, սակայն եթե հաշվի առնենք, որ մեր հաստատությունում անցկացված փորձաքննությունների արդյունքում արձանագրվում է սուիցիդենտների հոգեվիճակի և այլ՝ ավելի բարձր ծառայողական դիրք ունեցող կամ նույնիսկ հավասար ծառայողական դիրքով, սակայն հեղինակություն վայելող

զինծառայողների գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայության բարձր ցուցանիշ, ապա հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել զինծառայողների միջև նվաստացման, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի, արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու համար պարարտ հող հանդիսացող գործոններին, փորձել հասկանալ, թե ինչպես են կանխարգելվում դրանք և մշակել վերահսկողության հստակ և գործուն լծակներ:

Հատկանշական է, որ զինծառայողների ինքնասպանության կանխարգելմանն ուղղված աշխատանքները շոշափելի արդյունք չեն ապահովում, ինչն առավելապես պայմանավորված է խնդրի լուծման ոչ համակարգային մոտեցմամբ: Այսպես, օրինակ ինքնասպանության կանխարգելման շրջանակներում իրականացվող միջոցառումների շրջանակներում հոգեբան-մասնագետների կողմից հիմնականում ներկայացվում են ինքնասպանության նպաստող տեսական գործոնները, որոնք առավել բնորոշ են քաղաքացիական կյանքի խնդիրներին կամ այլ երկրների զինված ուժերին և դրանց ուղղությամբ աշխատանքը ՀՀ ԶՈՒ-ում ինքնասպանության կանխարգելման առումով ոչ մի շոշափելի փոփոխություն չի կարող բերել: Էական է նաև զորամասերում աշխատող հոգեբանների գործառույթների դիտարկումը՝ լրջորեն ուսումնասիրելով, թե արդյոք հոգեբանների ներգրավումն իսկապես գործուն միջոց է, թե իրական որակական փոփոխություն չենթադրող աշխատանք՝ մասնավորապես հաշվի առնելով, թե ինչպիսի վերաբերմունքի կարող է արժանանալ հոգեբանական աջակցության կարիք ունեցող և հոգեբանական խորհրդատվության դիմած զինծառայողը զորամասում այլ զինծառայողների կողմից և ինչ հավանական հետևանքներ դա կարող է ունենալ, կամ եթե դիտարկվում է համապատասխան հոգեբանական թեստավորման միջոցով զինակոչիկների հարմարողական ռեսուրսների ուսումնասիրությունը, ապա որքանով են դրանք արտահայտում իրական հոգեբանական խնդիրները և ինչ հետագա գործուն քայլեր են իրականացվում դրանց արդյունքների հիման վրա: Ուշագրավ է, որ առանձնահատուկ վերահսկողության անհրաժեշտություն է առկա առավելապես քրեակատարողական հիմնարկներին և կալանավայրերին բնորոշ, սակայն զորամասերում լայն տարածում գտած այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են հեղինակության ձեռքբերման միջոցով սեփական առավելությունների շահարկման տարածված տենդենցը, ինչպես նաև որոշակի հայհոյանքների սահմանումներով զինծառայողների հեղինակազրկումը և նվաստացումը, ինչի պայմաններում ըստ չգրված, բայց զինվորական ենթամշակույթում ընդունված օրենքների զինծառայողը մյուս զինծառայողների կողմից արժանանում է արհամարհական և նվաստացնող վերաբերմունքի և շատ հաճախ նման իրադրություններում որպես ստեղծված իրավիճակի ելք այդ զինծառայողները կամ ինքնասպանություն են գործում կամ կատարում են հակահիրավական գործողություններ, մինչև անգամ սպանություններ, որոնց դեպքում ևս իրականացվում են դատահոգեբանական փորձաքննություններ, և նմանատիպ երևույթների խնդրահարույց լինելը ուսումնասիրման ենթակա է լինում նաև այդ ուղղվածությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ հստակ կարելի է նշել, որ զինծառայողների ինքնասպանության կանխարգելմանն ուղղված աշխատանքների շրջանակներում, թերևս, գլխավոր խնդիրը զինվորական ենթամշակույթում ընդունված արատավոր բարքերի ոչնչացումն է՝ հստակ սահմանված օրենքների, դրանք չպահպանելու դեպքում պատասխանատվության սահմանման ճանապարհով, որի պայմաններում միայն հնարավոր կլինի իրականացնել նաև հոգեբանական պատշաճ և գրագետ աշխատանքներ: Զինծառայողների ինքնասպանությունների կանխարգելման շրջանակներում դատահոգեբանական փորձաքննությունների ոլորտում կատարված հետազոտությունները կարող են էական արժեք ունենալ ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ կատարած անձանց վերաբերյալ հոգեբանական վերլուծական աշխատանքների, ինչպես նաև ինքնասպանությունների հանգամանքների, հետազոտվող իրավիճակների, զինվորական ենթամշակույթում ընդունված բարքերի ու չգրված նորմերի ազդեցությունների ներկայացման առումով: Հարկ է նշել, որ վերոնշյալ հիմնախնդիրները վերաբերելի են ՊՆ աշխատակիցների, իրավական ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև զինծառայության հոգեբանական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների աշխատանքային գործունեությանը, ուստի կարելի է համարել, որ դրանք խիստ հոգեբանական բնույթ չեն կրում և ՀՀ ԶՈՒ-ում ինքնասպանության կանխարգելման առումով պահանջում են փոխկապակցված, փոխլրացնող և բովանդակային փոփոխություն ենթադրող համակարգային, բազմամասնագիտական մոտեցում:

Գրականություն

1. **Աթանեսյան Ա., Շաքարյան Ա., Ավետիքյան Վ., Ավետիսյան Ա., Հարությունյան Դ.** Զինվորական առաջնորդություն: Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ձեռնարկ ՀՀ զինված ուժերի անձնակազմի համար, Երևան. 2012, էջ 181.
2. **Մնացականյան Ա.Ս.** Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական որոշ հիմնախնդիրներ: Մենագրություն/ Արտակ Մնացականյան.- Եր.: Յասոն, 2016, էջ 237.
3. **Սեդրակյան Ա.Ս.** Զինվորական հանցագործությունները՝որպես ռազմական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ. Քրեաիրավական և քրեաբանական հետազոտություն., 2010, էջ 200.
4. **Енгалычев В.Ф., Шипшин С.С.** Судебно-психологическая экспертиза. Методическое руководство/ В.Ф. Енгалычев, С.С. Шипшин. - Репр. изд. - Калуга: КГУ им. К.Э. Циолковского, 2018. - 190 с.

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ САМОУБИЙСТВ И ПОПЫТОК САМОУБИЙСТВА ВОЕННОСЛУЖАЩИХ В ВООРУЖЁННЫХ СИЛАХ РА

Варданян А.Р. (ГНКО "Национальное бюро экспертиз, Ереван, Армения)

Принимая во внимание выражение количественного показателя самоубийств в Вооружённых Силах РА и необходимость разработки мер по их предотвращению, в данной статье рассматриваются такие особенности и закономерности, которые основаны на результатах проведения судебно-психологических экспертиз и исследования факторов, способствующих самоубийству. Осуществление подобных экспертиз и обобщение основных мотивов самоубийств и попыток самоубийства военнослужащих может способствовать систематической, целенаправленной и эффективной работе посредствам предотвращения самоубийств военнослужащих.

Ключевые слова: *самоубийство, Вооружённые Силы РА, военнослужащий, судебно-психологическое экспертное исследование.*

PSYCHOLOGICAL PROBLEMS OF SUICIDES AND SUICIDE ATTEMPTS OF SERVICEMEN IN THE ARMY OF REPUBLIC OF ARMENIA

Vardanyan A.R. (National Bureau of Expertise's" SNPO, Yerevan, Armenia)

Taking into account the expression of the quantitative indicator of suicides in the Armed Forces of the Republic of Armenia and the need to develop measures to prevent them, this article discusses such features and patterns that are based on the results of forensic psychological examinations and research on factors contributing to suicide. The implementation of such examinations and the generalization of the main motives for suicide and attempted suicide of military personnel can contribute to a systematic and focused work on effective means of preventing the suicide of military personnel.

Keywords: *suicide, RA Armed Forces, militaryserviceman, forensic-psychological expertise.*